Սանդար—Սաղախլու երկաթուղագիծը, Ուլուխանլու գիծը: Ցեռոյ, նրանք յայտնեցին, որ բոլոր խռովութիւնները տեղի են ունենում երկաթուղու մօտ երկաթուղային հաղորդակցութեան շուրջը... Նրանք կարծում էին, որ այս ամենը պատահական բան չէ, որ կան ինչ որ մութ տարրեր, որոնք առաջ են բերում այդ ամենը և գործում որոշ նպատակով, որպէսզի խանգարեն հաղորդակցութեան միջոցները, արգելք հանդիսանան ռազմաճակատի պաշտպանութեան, և որ այս բանում թէ՛ մահմեդական ու հայ և թէ ամբողջ Անդրկովկասի ազդաբնակութիւնը գործիք է այդ մութ ուժերի ձեռքին... Երևանի նահանգի արևելեան մասը, ուր ազդաբնակութիւնը խառն է, արդէն համարեա անծանօթ մի երկիր է· յայտնի չէ, թէ ինչ է կատարւում այնտեղ· ոչ ոք ոչ մի լուր չի ստանում և այնտեղ մուտք գործելը բոլորովին անհնար է:

Միւս կողմից հայ հասարակութեան վիճակը չափազանց ծանր էր այնտեղ: Նախ, ինչպէս ձեզ յայտնի է, այնտեղ կազմակերպւում են հայկական զօրամասեր, որոնք պէտք է ուղարկուէին ռազմաճակատ: Այդ զօրամասերը մի քանի շաբաթ սպասեցին ուղարկուելու օրին: Որոշ մասեր առաջ շարժուեցին, երկաթուղագծի վրա, գիծն ու պահեստները պահպանելու համար: Եւ ահա ստեղծուեց այնպիսի դրութիւն, որ անհնար էր ոչ ռազմաճակատ ուղարկել, ոչ էլ Շահթախթում, Դաւալուում և, կարծեմ, Նախիջևանում կանգնած զօրամասերին օգնութիւն հասցնել: Նրանք կտրուեցին իրարից և ո՛չ մի հնար չկար նրանց միջև կապ հաստատելու: Հայ զօրամասերը չէին կարող հանդուրժել նման դրութիւն, չէին կարող հանդուրժել, որ շաբաթներով մնան նստած ու չկարողանան մեկնել ռազմաճակատ: Ինձ յայտնեցին հայ գործիչները, որ նրանք թափեցին ամէն ճիգ, որպէսզի զսպած պահեն այդ զօրամասերը· նրանք զգում են, որ մութ ուժերը դրդում են նրանց յարձակուելու մահմեդական բնակչութեան վրա: Ես տեսել եմ հայ զօրամասերը թէ այստեղ և թէ ուրիշ տեղեր և պէտք է ասեմ, որ Երեւանում նրանք բաւական կարգապահ են, բայց նրանց ա՛յս վիճակում պահելը կը լինի դրեթէ անհնար...

Մեր գլխաւոր նպատակն էր երկաթուղային հաղորդակցութեան վերականգնումը Ուլուխանլու և Ջուլֆա կայարանների միջև: Մենք այդ չկարողացանք կատարել, որովհետև չկարողացանք անցնել այնտեղ: Մեր ստացած տեղեկութիւններով կամուրջներն ու գիծը այնտեղ բոլորովին փչացած են և եթէ մենք ուղեկցինք գնալ, պէտք է մեզ հետ առնէինք շինուածանիւթերի մի ամբողջ գնացք, որպէսզի վերականգնէինք ճանապարհը: Մեզ ասում էին, թէ մեզ կը ձերբակալեն և թոյլ չեն տայ առաջ անցնելու: Պատուիրակութիւնը վերադարձաւ առանց որևէ բան անելու:

Աւելի մռայլ պատկեր դժուար էր գծել: Երկու ժողովուրդներ՝ կոկորդ-կոկորդի՝ յօշոտում են միմեանց, իսկ երկրի կենտրոնական իշխանութիւնը դատարկ խօսքերից զատ ոչինչ չունի նրանց ասելիք: Այս պայմաններում մեծ պաղարիւնութիւն ու կամք պէտք էր տեղական գործիչներին՝ «մութ ուժերի» սադրանքին չենթարկուելու համար: Եւ դրա վրա էր հրաւիրում Կարճիկեանն իր զեկուցման վերջում՝ պատասխանելով միաժամանակ թուրք պատգամաւորների աղմկարար ու գրգռիչ ճառերին. «Ես մտնում եմ հայ ու մահմեդական տեղական գործիչների դրութեան մէջ· այնտեղ հրդեհն արդէն սկսած է, իսկ մենք չենք տալիս ոչ մի օգնութիւն և ոչ մի միջոց հանգցնելու համար այդ հրդեհը: Բայց, քաղաքացի պատգամաւորներ Անդրկովկասեան Սէյմի, մի՛ խանգարէք նրանց, թո՛յլ տուէք, որ նրանք իրենք հանգցնեն հրդեհը — մենք նրանց օգնել չենք կարող այժմ: Մի՛ հանէք փոթորիկ հրդեհի ժամանակ: Մենք չպէտք է կորցնենք մեր պաղարիւ-